# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«15» սեպտեմբերի 2023 թվականի N 2335-Ա**

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՎԱՆՈՒՇԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԻՐ ԵՂԲՈՐ՝ ՎԱՀԱՆ ՎԱՆՈՒՇԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի սեպտեմբերի 1-ին՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոց 52 տան բնակիչ՝ Գևորգ Վանուշի Մարտիրոսյանը (անձնագիր՝ AS0402441, տրված՝ 19.10.2018 թվականին 064-ի կողմից) խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անգործունակ ճանաչված եղբոր՝ 28.07.1992 թվականին ծնված Վահան Վանուշի Մարտիրոսյանի (անձնագիր՝ AT0505343, տրված՝ 22.06.2020 թվականին 064-ի կողմից) նկատմամբ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 20.06.2023 թվականի թիվ ՇԴ/3847/02/20 վճռով Վահան Վանուշի Մարտիրոսյանը ճանաչվել է անգործունակ:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 09.08.2023 թվականին տրված տեղեկությունների համաձայն դիմումատուն՝ Գևորգ Վանուշի Մարտիրոսյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

«Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն Գևորգ Վանուշի Մարտիրոսյանը իր եղբոր՝ Վահան Վանուշի Մարտիրոսյանի հետ բնակվում է Գյումրի քաղաքի Մայակովսկու փողոց 52 տանը (հիմք՝ տեղեկանք, N.1833 տրված՝ 21.08.2023 թվականին):

Ելնելով անգործունակ ճանաչված Վահան Վանուշի Մարտիրոսյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Վանուշի Մարտիրոսյանի 2023 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 18474 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել խնամակալություն՝ Գևորգ Վանուշի Մարտիրոսյանին (անձնագիր՝ AS0402441) նշանակել խնամակալ թիվ ՇԴ/3847/02/20 վճռով անգործունակ ճանաչված իր եղբոր՝ 28.07.1992 թվականին ծնված Վահան Վանուշի Մարտիրոսյանի (անձնագիր՝ AT0505343) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Վանուշի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

15.09.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«15» սեպտեմբերի 2023 թվականի N 2334-Ա

**ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ՝ ԳԱՌՆԻԿ ԼԵՎՈՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ՆԱՐԵԿ ԼԵՎՈՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի սեպտեմբերի 14-ի Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին քննարկվել է՝ 22.04.2016 թվականին ծնված Գառնիկ Լևոնի Սիմոնյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ587477), 14.06.2018 թվականին ծնված Նարեկ Լևոնի Սիմոնյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ587464) և 21.11.2019 թվականին ծնված Վարդան Մաթևոսյանի (ծննդյան վկայական՝ N=01196096563) հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու հարցը:

Տատիկի՝ Սիրուշ Վոլոդյայի Սիմոնյանի բանավոր հայտարարությամբ երեխաների մայրը՝ Անի Արտակի Սիմոնյանը և հայրը՝ Լևոն Գառնիկի Սիմոնյանը ժամանակավորապես մեկնել են Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի, անչափահաս երեխաները հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակում և բնակվում են սոցիալ-կենցաղային խիստ անբարենպաստ պայմաններում, երեխաների համար չի ստեղծված անվտանգ միջավայր, բացակայում է ապրուստի միջոցը:

Ելնելով անչափահասներ՝ Գառնիկ Լևոնի Սիմոնյանի, Նարեկ Լևոնի Սիմոնյանի և Վարդան Մաթևոսյանի շահից և հիմք ընդունելով «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի և Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի համատեղ կազմված արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26 մայիսի 2016 թվականի N 551-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 17-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ի նկատի ունենալով երեխաների լավագույն շահի առաջնային գնահատման կարևորությունը՝

1. Անչափահասներ՝ 22.04.2016 թվականին ծնված Գառնիկ Լևոնի Սիմոնյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ587477), 14.06.2018 թվականին ծնված Նարեկ Լևոնի Սիմոնյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ587464) և 21.11.2019 թվականին ծնված Վարդան Մաթևոսյանի (ծննդյան վկայական՝ №01196096563) հետագա խնամքը և դաստիարակությունը կազմակերպել «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում, տրամադրելով շուրջօրյա խնամք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2023 թվականի N 2333-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԲՈՒՅՍԵՐՈՎ ԵՎ ԾԱՂԿԱՄԱՆՆԵՐՈՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԲՈՒՅՍԵՐՈՎ ԵՎ ԾԱՂԿԱՄԱՆՆԵՐՈՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի տեղակալ,

3) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

15.09.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2023 թվականի N 2332Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԲՈՒՅՍԵՐՈՎ ԵՎ ԾԱՂԿԱՄԱՆՆԵՐՈՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով քաղաքացիների սպասարկման գրասենյակի բույսերով և ծաղկամաններով կահավորման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմավորել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝
ա. պատասխանատու ստորաբաժանման վերադաս՝ Ալբերտ Մարգարյան – Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Վարդան Ղազարյան – Գյումրի համայնքապետարանի աշխատակազմի դենդրոլոգ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

15.09.2023

**2023թ. ք. Գյումրի** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2023 թվականի N 2331 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ԳԵՈՐԳԻԻ ՁԱՄՈՒԿԱՇՎԻԼԻԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի փողային նվագախումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ից:

**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2023 թվականի սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 6-ը ներառյալ:

**3.** Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության դիրիժոր Արտակ Արտուշի Գրիգորյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Գեորգիի Ձամուկաշվիլիին և Արտակ Արտուշի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2023 թվականի N 2320Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՏԻՐԱՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Արման Սերյոժայի Տիրայանի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արման Սերյոժայի Տիրայանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 30 աշխատանքային օր՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 23-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Արման Սերյոժայի Տիրայանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Հարություն Ջիվանի Խաչատրյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Սերյոժայի Տիրայանին և Հարություն Ջիվանի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2023 թվականի №2329-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑ, 6 ՇԵՆՔ, 12 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №24032021-08-0012) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարլեն Մխլաջյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №19293 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Հովսեփյան փողոց, 6 շենք, 12 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №24032021-08-0012) վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑ, 6Ա ՇԵՆՔ, 12/2 ԲՆԱԿԱՐԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» սեպտեմբերի 2023 թվականի N2328-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 62 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 70.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ԴՌՈՒՌԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԴՌԱՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ 1 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 452.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանին ժառանգության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված 2023 թվականի մայիսի 08-ին N 3122) Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 62 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 70.85 (յոթանասուն ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, ինքնակամ փակված է 1 (մեկ) դուռ, ինքնակամ դռան է ձևափոխված 1 (մեկ) պատուհան և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 452.9 (չորս հարյուր հիսուներկու ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը (հաշվառված Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023WSJKLG և 2023XALUUM ծածկագրերով):

Քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանի կողմից լիազորված անձ Արամ Կյուրեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինության նկատմամբ Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանի կողմից լիազորված անձ Արամ Կյուրեղյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 19-ին N 15193 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանի (ծնված 1961 թվականի սեպտեմբերի 18-ին) սեփականության իրավունքը՝ իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 62 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանին պատկանող Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 62 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, սահմանված չափից ավել օգտագործվող, 152.9 (մեկ հարյուր հիսուներկու ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանին, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց,

ընդամենը 679182 (վեց հարյուր յոթանասունինը հազար մեկ հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 62 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 70.85 (յոթանասուն ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռը, ինքնակամ դռան ձևափոխված 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3938 (երեք հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 152.9 (մեկ հարյուր հիսուներկու ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալեքսանդր Վլադիմիրի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2324-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱԿՈԲԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N32 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 92.23 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հարություն Հակոբի Հակոբյանին պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցք N32 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 92.23 (իննսուներկու ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետ ներքին մակերեսով բնակելի շինություններ (որից 36.25 (երեսունվեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 25.9 (քսանհինգ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցված են 2001թվականի մայիսի 15-ից հետո) և ինքնակամ փակված է 1 (մեկ) դուռ:

Քաղաքացի Հարություն Հակոբյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցների պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցները Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023EBYCRS ծածկագիրը և քաղաքացի Հարություն Հակոբյանի լիազորված անձ Արտյոմ Բարսեղյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N3375 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1 Քաղաքացի Հարություն Հակոբի Հակոբյանին պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց 1-ին նրբանցք N32 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 92.23 (իննսուներկու ամբողջ քսաներեք հարյուրերորդական) քառակուսի մետ ներքին մակերեսով բնակելի շինությունները (որից 36.25 (երեսունվեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 25.9(քսանհինգ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցված 2001թվականի մայիսի 15-ից հետո) և ինքնակամ փակված 1(մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 101506 (հարյուր մեկ հազար հինգ հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3.Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

14.09.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2326-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ԳԱՐԵԳԻՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ N10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 59.79 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 54.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ռոբերտ Գարեգինի Գասպարյանին պատկանող Գյումրի քաղաքի Աղայան փողոց N10 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 59.79(հիսունինը ամբողջ յոթանասունինը հարյուրորորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ, ինքնակամ բացված է 1 (մեկ) դուռ, ինքնակամ փակված է 1 (մեկ) դուռ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 54.6 (հիսունչորս ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Ռոբերտ Գարեգինի Գասպարյանը դիմել են Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023DMQQDQ, 2023NBSQY8 ծածկագրերը, քաղաքացի Ռոբերտ Գարեգինի Գասպարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N4167 թվագրմամբ)'

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ռոբերտ Գարեգինի Գասպարյանի (ծնված 1956 թվականի հոկտեմբերի 07-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աղայան փողոց N10 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 54.6 (հիսունչորս ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Աղայան փողոց N10 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 59.79(հիսունինը ամբողջ յոթանասունինը հարյուրորորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն, ինքնակամ բացված 1 (մեկ) դուռն, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3938 (երեք հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռոբերտ Գարեգինի Գասպարյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

14.09.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2325-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ N14 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 8.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 17.72 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (8.37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N14 հասցեին կից 8.86 (ութ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 17.72 (տասնյոթ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (8.37(ութ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Վարդան Խաչատրյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը՝ չի խախտում՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023JBPWDM ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N14 հասցեին կից 8.86 (ութ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 17.72 (տասնյոթ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (8.37(ութ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վարդան Խաչատրյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և ճարտարապետության բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

14.09.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2324-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2113-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի <<Քաղաքացիներ Լեյլի Հովհաննեսի Եղիազարյանին (1/3), Հրանտ Վազգենի Եղիազարյանին (1/3), Անահիտ Վազգենի Եղիազարյանին (1/3) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կուրղինյան փողոց N 14 հասցեում ինքնակամ կառուցված 199,01 քառակուսի մետր արտաքին (179,87 քառակուսի մետր ներքին) մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 18,8 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2113-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 29/08/2023 թվականի N Կ-29082023-08-0138 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի <<Քաղաքացիներ Լեյլի Հովհաննեսի Եղիազարյանին (1/3), Հրանտ Վազգենի Եղիազարյանին (1/3), Անահիտ Վազգենի Եղիազարյանին (1/3) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կուրղինյան փողոց N 14 հասցեում ինքնակամ կառուցված 199,01 քառակուսի մետր արտաքին (179,87 քառակուսի մետր ներքին) մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 18,8 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2113-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023SJMVXQ և 2023TNDU5G ծածկագրերը>> բառերը և թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N2323-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 02 -Ի N 1707-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվական օգոստոսի 02-ի <<Քաղաքացի Գայանե Մնոյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղարիբջանյան փողոց N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 17,03 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելին օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 63,08 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1707-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 11/07/2023 թվականի N Կ-11072023-08-0008 որոշում): Ներկայացվել է նոր ճշտագրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 02-ի <<Քաղաքացի Գայանե Մնոյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղարիբջանյան փողոց N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 17,03 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելին օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 63,08 քառ.մ մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 1707-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<63,08 (վաթսուներեք ամբողջ ութ հարյուրերորդական>> թվերը և բառերը փոխարինել <<46,37 (քառասունվեց ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) >> թվերով և բառերով.
   2) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<17,03 (տասնյոթ ամբողջ երեք հարյուրերորդական)>> թվերը և բառերը փոխարինել <<25,61 (քսանհինգ ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական)>> թվերով և բառերով.
   3) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20238DZP75 և 2023R9GA6H ծածկագրերը>> թվերով և բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2322-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 08-Ի N 2001-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 08-ի <<Քաղաքացի Հովհաննես Անուշավանի Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N 23 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 140,19 քառակուսի մետր մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 11,69 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2001-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 11/09/2023 թվականի N Կ-11092023-08-0021 որոշում): Ներկայացվել է նոր ճշտագրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 08-ի <<Քաղաքացի Հովհաննես Անուշավանի Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Շիրվանզադեի փողոց N 23 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 140,19 քառակուսի մետր մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 11,69 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2001-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 2-րդ կետում <<շինություններն>> բառից հետո լրացնել <<ինքնակամ բացված 3 (երեք) դուռ, ինքնակամ փակված 1 (մեկ) դուռ>> թվերը և բառերը.

2) որոշման 2-րդ կետում <<օրինական>>բառից հետո լրացնել <<և տեղական բյուջե ենթակա է գանձման 7876 (յոթ հազար ութ հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ>> թիվը և բառերը.

3) նախաբանում <<թվագրմամբ>> բառից հետո լրացնել <<և հիմք՝ ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023PHJYC7 և 2023MYGJNS ծածկագրերը>> բառերը և թվերը:

14.09.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2321-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 769-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 29-ի <<Քաղաքացի Դավիթ Սուրենի Դոշոյանին պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 186ա հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 100,29 քառակուսի մետր մակերեսով տունը և 2,95 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված 2(երկու) դռները, ինքնակամ փակված 2(երկու) դռները և 1(մեկ) պատուհանը օրինական ճանաչման մասին>> N 769-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 13/07/2023 թվականի N Կ-13072023-08-0145 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 29-ի <<Քաղաքացի Դավիթ Սուրենի Դոշոյանին պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոց N 186ա հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 100,29 քառակուսի մետր մակերեսով տունը և 2,95 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված 2(երկու) դռները, ինքնակամ փակված 2(երկու) դռները և 1(մեկ) պատուհանը օրինական ճանաչման մասին >> N 769-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<100,29(մեկ հարյուր ամբողջ քսանինը հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<94,88(իննսունչորս ամբողջ ութսունութ հարյուրերորդական)>> թվով և բառերով:

14.09.2023

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2320Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով ավտոբուսների եվ էլեկտրական ավտոբուսների ձեռքբերման նպատակով կազմավորել հայտերը գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Մենուա Մկրտչյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Շուտիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ

3) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

4) Օլգա Գևորգյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

5) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գործակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

13.09.2023

2023թ. ք. Գյումրի

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի № 2319Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳՆՈՒՆԻ ԵՆԳՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍԵՎՅԱՆ ՓՈՂՈՑ, 30 ՇԵՆՔ, 3 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գնունի Ենգոյանի լիազորված անձ Թադևոս Ենգոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 19203 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Քաղաքացի Գնունի Ենգոյանին պատկանող Գյումրի քաղաք, Սևյան փողոց, 30 շենք, 3 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 30/3 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի № 2318Ա

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԳԵՍ ԱԴԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 34Բ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վարդգես Ադամյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №19232 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Ժառանգության իրավունքով քաղաքացի Վարդգես Ադամյանին պատկանող Գյումրի քաղաք, Մատնիշյան փողոց, 34բ բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ս. ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ, 30 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

14.09.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի №2317Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԻԶԱՄՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 78,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 52,24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 08-ի №2271–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Նիզամու փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 78,3 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 52,24 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 48/3 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2316Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 770-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 29-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոց N 85/2 հասցեի տանը կից գտնվող 38.3քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 69.23 քառակուսի մետր արտաքին ( 64.03 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N770-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած բացթողման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 29-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոց N 85/2 հասցեի տանը կից գտնվող 38.3քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 69.23 քառակուսի մետր արտաքին (64.03 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N770-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) Նախաբանի վերջում լրացնել <<հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023VKTQG9 ծածկագիրը >> բառերը և թվերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2023 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2315-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով ավտոբուսների եվ էլեկտրական ավտոբուսների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. Գեորգի Ղազարյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետի պաշտոնակատար,
բ. Արամ Սարուխանյան - համայնքապետարանի աշխատակազմի տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ,

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.09.2023

**2023թ. ք. Գյումրի**

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2314 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀՐԱԾԳՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀԱՄԼԵՏ ՎԱԶԳԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐԾԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Համլետ Վազգենի Մկրտչյանի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Համլետ Վազգենի Մկրտչյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի հոկտեմբերի 2-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 30 աշխատանքային օր՝ 2023 թվականի հոկտեմբերի 2-ից նոյեմբերի 4-ը ներառյալ:
3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Համլետ Վազգենի Մկրտչյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Սամվել Սպարտակի Մուրադյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Համլետ Վազգենի Մկրտչյանին և Սամվել Սպարտակի Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.09.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2313-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ԱՐԱԳԱՇԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Լիլիթ Արագաշի Թովմասյանի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագաշի Թովմասյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից:
2. Չվճարվող արձակուրդի տևողությունը 5 օր՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից 22-ը ներառյալ:
3. Չվճարվող արձակուրդի ընթացքում Լիլիթ Արագաշի Թովմասյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետի տեղակալ Էդգար Գագիկի Մարտիրոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Արագաշի Թովմասյանին և Էդգար Գագիկի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2312Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳԱԳԻԿԻ ԽԱՆԳԵԼԴՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԹՈՌԱՆ՝ ՆԵՖԵԼԻ ԳԱԳԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ի նկատի ունենալով, որ անչափահաս՝ 03.10.2014 թվականին ծնված Նեֆելի Գագիկի Մուրադյանի (բնակության հասցե՝ քաղաք Գյումրի Մուսայելյան փողոց 76ա շենք 14 բնակարան) կենսաբանական հայրը՝ Գագիկ Սամվելի Մուրադյանը (անձնագիր՝ BA0795040, տրված՝ 24.11.2015 թվականին 064-ի կողմից) վերադարձել է Հունաստանի Հանրապետությունից (հիմք՝ դիմում համայնքապետարանում մուտքագրված 12.09.2023 թվականին թիվ 19141 թվագրությամբ) ստանձնելով իր երեխայի խնամքը և դաստիարակությունը և հիմք ընդունելով վերոգրյալը Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն չտալ քաղաքացի՝ Վարդանուշ Գագիկի Խանգելդյանին (բնակության հասցե՝ քաղաք Երևան Շոպրոնի 2 նրբանցք 4 շենք 24 բնակարան) խնամակալություն սահմանելու և իր անչափահաս թոռան՝ 03.10.2014 թվականին ծնված Նեֆելի Գագիկի Մուրադյանի նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդանուշ Գագիկի Խանգելդյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.09.2023

x

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«14» սեպտեմբերի **2023 թվականի N 2314-Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿՈՐՅՈՒՆ ՀՈՎՍԵՓԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏՐԴ.ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ 17 ՇԵՆՔ 48 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՀՈՎՍԵՓ ԿՈՐՅՈՒՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի սեպտեմբերի 11-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Կորյուն Հովսեփի Սիմոնյանը (նույնականացման քարտ՝ 014075451)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 19.05.2010 թվականին ծնված Հովսեփ Կորյունի Սիմոնյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ125815) Գյումրի քաղաքի Տրդ.Ճարտարապետի փողոց 17 շենք 48 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Հովսեփ Կորյունի Սիմոնյանը (հիմք՝ 02.12.2015 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02122015-08-0037):

Նիստին ներկա գտնվող երեխայի հայրը՝ Կորյուն Հովսեփի Սիմոնյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Գյումրի քաղաքի Տեր-Գաբրիելյան փողոց 10 բնակելի տունը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ 11.11.2015 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11112015-08-0037), (հիմք՝ տեղեկանք N.2054 տրված՝ 11.09.2023 թվականին «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Հովսեփ Կորյունի Սիմոնյանը հայտնեց, որ համաձայն է վաճառելու բնակարանի իր մասնաբաժինը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Կորյուն Հովսեփի Սիմոնյանի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 19009 թվագրությամբ) Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«14» սեպտեմբերի 2023 թվականի N 2310-Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՉԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ MERCEDES-BENZ E 320 ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐԻԲԵԿԻ ԵՂՈՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ 1/4 ԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի սեպտեմբերի 8-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 1 թաղամաս 5ա շենք 22 բնակարանի բնակիչ՝ Սուսաննա Վաչիկի Մարտիրոսյանը (անձնագիր՝ AT0412892, տրված՝ 11.03.2020 թվականին 056-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 27.09.2013 թվականին ծնված Գուրգեն Սարիբեկի Եղոյանի (ծննդյան վկայական՝ ԱԲ №285929) MERCEDES-BENZ E 320 մակնիշի ավտոմեքենայի 1/4 բաժինը:

Երեխայի հայրը՝ Սարիբեկ Գուրգենի Եղոյանը մահացել է 2022 թվականի հոկտեմբերի 12-ին (հիմք՝ պետական վկայական մահվան մասին ԲԱ623454):

Նիստին ներկա գտնվող երեխայի մայրը՝ Սուսաննա Վաչիկի Մարտիրոսյանը հայտնեց, որ իր անչափահաս երեխան՝ Գուրգեն Սարիբեկի Եղոյանը ժառանգ է հանդիսանում ավտոմոբիլի՝ մակնիշը, տիպարը-MERCEDES-BENZ E 320, հաշվառման համարանիշը-13OD133, 1/4 (մեկ չորրորդ) բաժնից, համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ներքին Գործերի Նախարարության Ոստիկանության «Ճանապարհային Ոստիկանություն» Ծառայության Գրանցման-Հաշվառման և Քննական Հյուսիսային Կենտրոնից 16.08.2023 (տասնվեցը օգոստոսի երկու հազար քսաներեք) թվականին տրված N 7/7 14/100177-23 գրության (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված՝ 29.08.2023 թվականին ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Գ.Բզնունու կողմից թիվ 318 ժառանգական գործ, գրանցված է գրանցամատյան թիվ 3960-ով):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Սուսաննա Վաչիկի Մարտիրոսյանի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 18897 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝